

ՍՐՏԱԳԻՆ, ԿՈԶ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ԱՆԴՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՍԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Սանհագի սարագիր Հայութեան այժմու վիճակը կարօտ չէ նկարագրութեան:

Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի մեր վսանգահար ազգայինները, եւ Եգիպտոսի եւ Սփիւռքի աւելի բախսաւոր հայրենակիցները արդէն իսկ ձեռնարկած են գործի, օգնութեան հասնելու համար իրենց տունն ու սնեստութիւնը, իրենց դարաւոր հայրենիքը լեղով՝ սարագրութեան ցուպը վերստին ձեռք առնելու սփայտած շուրջ 25,000 մեր դժբախտ հայրենակիցներուն:

Պաղեստինի եւ Անդրյորդանանի մեր սիրելի ժողովուրդը, չենք սարակուսիր, ճշմարիտ խանդաղասանով պիտի բերէ իր արժանուէր մասնակցութեան բաժինը օգնութեան այս մեծ ու անյետաձգելի պարսփին:

Ամէն հայ իր հոգիին մէջ դեռ վառ կը պահէ դառն յիշատակը անցեալի սարագրութեան այն դժիւնք օրերուն, ուր նիւթական դոյզն օգնութիւն մը, եւ բարի խօսք մը ճոյնիսկ կը սփոփէին մեր հայրենազուրկ բազմութիւնները:

Սիրելի Հա՛յ ժողովուրդ,

Դուռն օր աղանաւես եղած եւ փու անձիդ վրայ իսկ կրած ես բրնձագաղթի եւ սարագրութեան տառապանքն ու դառնութիւնները, յիշէ՛ հիմա այդ օրերը: Տա՛ւր ինչ օր կուգայ արեւդ, որպէսզի փու արիւնէդ եղբայր մը, քոյր մը, գերեզմանի դուռը հասած ծերունի մը, եւ աչկերը աւաւառնի լոյսին դեռ նոր բացած մանուկ մը կարենան ապրիլ եւ քիչ ատ ժամելի կեանք մը ապահովել:

Անոնք պիտի չմոռնան փու վեհանձն օժանդակութիւնը, ինչպէս դու ինքդ չես մոռցած, այսօր, երբ համեմատաբար դիւր ու ինքնապահ վիճակ մը ստեղծեցիր, ընդդէմ բազմապիսի դժուարութեանց եւ արգելներու:

Վստան եղի՛ր, այսօրուան թուառ ամբողջ սարագիրներուն՝ վաղուան հպարտ ու եղբայրասէր քաղաքացին պիտի ըլլայ:

Թո՛ղ Ամենախնամ Արարիչը միաբարեւ հայ ժողովուրդը, եւ իր աստուածային աջոյն հովանին սարածէ անոր վրայ, ուր օր ալ գտնուի անիկա, Հայրենիքին մէջ թէ ի Սփիւռս, ու զերծ պահէ զայն նորանոր փորձութիւններէ:

6 Օգոստոս 1939

Ա.թոռ Ս. Յակոբեանց, Երուսաղէմ

ՊԱՏՐԻԱՐԺ ԵՐՈՒՍԱԼԷՄԻ
ՍԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ